Հաստատում եմ

Տնօրեն՝ Լ. Վարդանյան

01.09.2023

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇՐԱԳԻՐ

Գյումրու թիվ 10 հիմնական դպրոց

7-րդ դասարան

Դասղեկ՝ Լ. Գաբրիելյան

2023-2024 ուստարի

Դասավանդող ուսուցիչներ

	Հայոց լեզու	Գաբրիելյան Լուսինե
	Գրականություն	Գաբրիելյան Լուսինե
	Հայոց պատմություն	Գալստյան Մարգարիտա
	Համաշխարհային պատմություն	Գալստյան Մարգարիտա
	Հասարակագիտություն	Աբրահամյան Ռուզաննա
	Ռուսաց լեզու	Ղանդիլյան Սիրանուշ
	Ֆրանսերեն	Վարդպարոնյան Սիրանուշ Հակոբյան Գոհար
	Անգլերեն	Մալխասյան Մանե
	Հանրահաշիվ	Աբգարյան Գոհար (փոխ.)
	Երկրաչափություն	Աբգարյան Գոհար (փոխ.)
	Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն	Մուշեղյան Վարսիկ
	Աշխարհագրություն	Դանիելյան ֆենյա
	Ֆիզիկա	Մուշեղյան Վարսիկ
	Քիմիա	Ասլանյան Աննա
	Կենսաբանություն	Մեսրոպյան Անահիտ
	Կերպարվեստ	Մուշեղյան Վարսիկ
	Երաժշտություն	Ալեքսանյան Օվսաննա
	Ֆիզկուլտուրա	Մալումյան Վարդուհի

Դասարանի բնութագիրը ուսումնական տարվա սկզբին

7-րդ դասարանում տարեսկզբին սովորում է 33 աշակերտ՝ 17 տղա, 16 աղջիկ։
Դասարանը շատ ակտիվ է և աշխույժ։ Դասարանում ունենք նորեկներ՝ Մարտիրոսյան Էմանուելը և Գևորգյան Կարինեն, ի դեպ Կարինեն անցած ուստարում էր գնացել այլ քաղաք։

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Հոգևոր դաստիարակություն-Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր, մշակութային կենտրոններ։ Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք Քրիստոնեությաննկատմամբ։ Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը։

Գեղագիտական դաստիարակություն - Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, գեղեցիկը ի՞նչ դեր ունի ներկայիս կյանքում։ Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ։ Հաճախակի կազմակերպել կինոդիտում և ձևավորել գեղագիտական ճաշակ։

Ռազմահայրենասիրական դաստիարակություն – Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ։ Նշել մի քանի հերոսների անուններ և թվարկել բնավորության գծերը, որտեղ առավել բացահայտվում է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը։

Ֆիզիկական դաստիարակություն - Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն։ Բացատրել, որ աշակերտները հետևեն իրենցֆիզպատրաստվածությանը։

Աշխատանքային դաստիարակություն – Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը։ Աշխատասիրությունը և լավ կրթությունը հնարավորություն կտա հաղթահարել ներկայիս դժվար պայմանները։

Բնապահպանական դաստիարակություն – Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը, որպեսզի աշակերտները լավ ճանաչեն բնությունը և կարողանան պահպանել բնությունը։

Դպրոց-ընտանիք կապը – Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը։ Անհրաժեշտ է սերտ կապիմեջ պահել դպրոց-ընտանիք կապը, առավել որակյալ կրթություն և դաստիարակություն ապահովելու համար է։

Կազմակերպչական հարցեր ուսումնական տարվա սկզբին

1. Մաքրել և վերակահավորել դասարանը։
2. Կազմակերպել դասագրքերի ստացումը և բաշխումը
3. Կազմել հերթապահության գրաֆիկ։
4. Աշակերտների հետ համատեղ ընտրել տարվա ընթացքում քննարկվելիք թեմաներ և դասղեկի ժամերին անցկացվելիք զրույցների թեմատիկան։
5. Հավաքել սպառիչ տեղեկություններ լրացուցիչկրթական հաստատություններում, խմբակներում աշակերտի մասնակցության մասին։
6. Ընտրել ծնողկոմիտեի անդամներ և նախագահ։

Ամենօրյա աշխատանքներ

- Կատարել աշակերտների հաճախումների հաշվառում։
- Հետևել աշակերտների արտաքին տեսքին։
- Հետևել աշակերտների անձն ական հիգիենային։
- Հետևել աշակերտների սնվելուն և բարեկիրթ վարքին։
- Հետևել դասասենյակի մաքրությանը՝ ըստ հերթապահության գրաֆիկի։
- Ստուգել դասագրքերի և տետրի առկայությունը ըստ դասացուցակի։
- Հետևել, որ աշակերտները դասամիջոցներին

չբղավեն, չվազեն, չհրմշտեն իրար։
- Հնարավորինս կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները։

Ամենշաբաթյա աշխատանքներ

- Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում։
- Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանց ծնողների հետ։
- Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշումներ կայացնել, անհրաժեշտության դեպքում կազմակերպել երկարօրյա պարապմունքներ։
- Զրուցել անհարգելի բացակայողն հաճախ ուշացող աշակերտների և նրանց ծնողների հետ։

Ամենամսյա աշխատանքներ

- Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին։
- Լսել դասարանի ավագին։
- Առաջադիմող աշակերտների հետ օգնել թույլ դասընկերներին։

Տարվա ընթացքում կատարվող աշխատանքներ

- Պահել ծնող-ուսուցիչ կապը։
- Հետևել դասագրքերի պահպանմանը։

- Կազմակերպել էքսկուրսիաներ թանգարան, թատրոն, համերգասրահ։
- Անցկացնել առկա և առցանց ժողովներ և պլանավորված զրույցներ։
- Հետևողական աշխատանք տանել ուսման առաջադիմության բարձրացման նպատակով։
- Կազմակերպել բանավեճեր աշակերտներին հուզող թեմաներով։

Ուսումնական տարվա վերջում կատարվող աշխատանքներ

- Տարեկան գնահատականների և դաստիարակչական աշխատանքների ամփոփում։
- Շնորհական ժողով։
- Դասագրքերի վերանորոգում և հանձնում։
- Դասասենյակի մաքրում և հանձնում։
- Ծնողներից տեղեկանալ ամառային հանգստի կազմակերպման մասին։
- Ծնողների հետ կազմակերպել ամառային էքսկուրսիա։
- Տարեկան հաշվետվության հանձնում։

Դասղեկի թեմատիկ պլանավորում

1.	Նոր ուսումնական տարվա սպասելիքները։	
2.	Աշակերտական խորհրդի ընտրություն։	
3.	Հայն ու հայրենասիրությունը։	
4.	Պետական խորհրդանիշները։	
5.	Ուսուցչի տոն։	
6.	Ազատ թեմա	
7.	«Բոլորը կարծում են, որ ես…., սակայն….» ինքնաբացահայտող նկարագիր։	
8.	«Ինքդ սովորեցիր, սովորեցրու ընկերոջդ» ուսուցանող զրույց։	
9.	Ի՞նչ է բուլինգը։	
10.	Սոցցանցերը և նրանցից բխող վտանգները, վիրտուալ բուլինգ։	
11.	Հոգեբանակն զրույց։	
12.	«Կարող եմ օգտակար լինել»։	
13.	Իմ վարքը տանը և դպրոցում։	
14.	Ի՞նչ տվեց ինչ 2023 թվականը, ի՞նչ ակնկալիքներ ունեմ 2024 թվականից։	
15.	«Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները»	
16.	«Պատասխանատու քաղաքացի»	
17.	Հայրենիքի նվիրյալները։	
18.	«Ընկերություն»	
19.	Ինչպե՞ս լինել լավ ընկեր	
20.	Մենք ուժեղ ենք միասին	
21.	Հոգեբանակ թեստ	
22.	Ազատ թեմա	
23.	«Կարողությունների հստակեցում»	
24.	Գարունը նոր կյանքի սկիզբ։	
25.	Կանանց միջազգային օրը։	
26.	«Երաժշտությունն իմ կյանքում»	
27.	Գեղանկարչության ցուցահանդես	

	Մայրության տոնի թեմայով։	
28.	Հայտնի մարդկանց կյանքի պատմություններից։	
29.	Մարդկային արժանիքներ, ինչպիսին պետք է լինեն առաջնորդները	
30.	Հոգեբանական թեստ	
31.	Ազատ թեմա	
32.	Միջազգային կազմակերպություններ և նրանց առաքելությունը։	
33.	Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ մեր դասարանում։	
34.	Իմ ձեռքբերումները և թերացումները այս ուստարում	